

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐԲ ԴՈՒՐՅԱՆ*

8. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՏԱՍՐ ՏԱՐԻՆ

Եվ ահա միջանկյալ ուրիշ շրջան մը Դուրյանի կյանքին մեջ: Այդ միջանկյալ շրջանը տեղեց ամբողջ տասը տարի:

Միջանկյալ, այո՛, բայց այն իմաստով միայն, որ պատասխանատու պաշտոնի վրա չէր: Այլապես ան միշտ շարունակեց «ուսանիլ և ուսուցանել», ինչպես ըրեր էր ամբողջ կյանքին մեջ, այս անգամ Կոստանդնուպոլսո՛ւ հայ եկեղեցիներու մեջ իբր քարոզիչ և իբրև ուսուցիչ հայ դպրոցներու:

Մյուս կողմն ան չհեռացավ ազգային պաշտոնական կյանքն ալ: Աղգային երեսփոխան էր, և ընտրվեցավ նաև Կրոնական ժողովի անդամ: Ամեն անգամ շուրջ մը կ'մտներ իրեն հետ Աղգային ժողով, ճիշտ այն օրերուն, երբ պարզապես գառազեղ մըն էր այդ ժողովը ու բոլորը կուրցած էին հոն կիրքով:

Հրապարակային ելույթներն միշտ կ'ստանալին: Եկեղեցւոյ բնմը և ուսուցչի ամբիոնն էին միայն, որ կողակտերին զայն:

1913-ի ամառը ևս, ինչպես 1912-ին, Եսայան սանուց միությունը հրապարակային դասախոսութեանց շարք մը կազմակերպած էր՝ արձակուրդի առթիւ Կոստանդնուպոլսո՛ւ համալսարանի ուսուցիչներուն համար մասնավորապես: Ամեն կողմն փափագ կար Դուրյանն ալ ունենալ դասախոսներու շարքին մեջ: Երբ իրեն ալ դիմեցի, տկարութիւնը պատրվակեց: Միակն էր հայ մտավորականութեան մեջ, որ մեղ կ'մերժէր:

Եվ անմիջապես ավելցնեմ, թե Օրմանյան, որ նոր ելած էր քառամյա իր «չլիս»-են և որեւէ մեկէն ավելի պատճառներ ունէր զգուշանալու հրապարակային արտահայտութիւններն (եթէ ոչ ուրիշ բանի, գոնն նշա-

վակ չըլլալու համար ցուցներու, ինչպես որ եղեր էր քանի մը անգամ, երբ փորձեր էր պատարագել), մեր դիմումը սիրով ընդունեց և Եսայան վարժարանին մեջ տվավ հմտալից դասախոսութեանց շարք մը, որոնց նյութն էր «Հայ եկեղեցւոյ հարաբերութիւնները ուրիշ եկեղեցիներու հետ»: Իր հրապարակային առաջին ելույթն էր, իր ակամա ճգնութենէն հետո:

Դասական հայերենի հայտնի տիրապետող Հակոբ Գուրգենի հոբելյանին առթիւ կազմակերպված մեծարանքի ցույցը, 1913 զեկտեմբեր 15-ին, առիթ մը եղավ, որ վեճ մը բռնկի ներկա գրողներուն միջև գրաբարի շուրջ: Հանդեսին միջոցին արտասանված բանախոսութիւններն մեկուն մեջ ակնարկութիւն մը եղած էր գրաբարի և աշխարհաբարի լեզվապայքարին և ազգի դրդված խոսք առին ներկա գրագետներն ումանք, ինչպես Զոհրապ, Սիպիլ, Դուրյան, Վարուժան՝ իրենց կարծիքը հայտնելու համար: Դուրյան այդ օրը համոզված ու ջերմ պաշտպանողական մը խոսեցավ ի նպաստ աշխարհաբարին, ըսելով, որ այլևս մեռած լեզու մըն է գրաբարը, և որ աշխարհաբարը, արդեն տիրացած իր բերականութեան և կանոններուն, ոչ մեկ կապ ունի անոր հետ և կրնա առանձին դարգանալ. եթէ Ոսկեդարու մեջ, ըսավ, սերունդ մը ունեցանք, որ գրաբարը գեղեցկութեամբ օժտեց, ինչո՞ւ պիտի չունենանք սերունդ մը նոր օրերուն ալ, որպէսզի փառքով պսակն աշխարհաբարը: Ու հետեյալ նմանութիւնը մեջ բերավ, սահմանելու համար գրաբարի և աշխարհաբարի


1 Հանդեսի պաշտոնական մասին մեջ ուղերձները լավեր էին գրկաւ. Վահրամ Բաբգոյանի, դոկտ. Տաղավարյանի, դոկտ. Վահնի, Արշակ Ալոյսիանի, Հայկանուշ Մառքի, Տիգրան Զոյկոյանի և իմ:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1960 թվականի N Ա-ից:

արժեքը: Նվազածու մը, ըսավ, կորսնցուցած էր իր նվազարանին մեկ թելը և տեղը ոսկի թել մը կանցներ, բայց այդ ոսկի թելը չէր ձայներ այնպես, ինչպես աղիքն թելը, ու նվազարանը զրկված էր ահա իր ներդաշնակութենէն. գրաբարը այսօր այդ ոսկի թելն է, որ այլևս չի կրնար հնչել աշխարհաբարին բնականությամբն ու ներդաշնակությամբը: Դուրյան վերջացուց ըսելով, թե ինքը հոգեւորին ընծայված հարգանքի արտահայտու-

էին ասոնք, մեծ մասամբ ֆրանսացի բանաստեղծներն:

Պատերազմը ահաւոր շրջան մը բացաւ: Զարհուրանքի մեջ էին և անոնք, որոնց դահիճը մոռցեր էր դալի: Դուրյան Բերայի Ս. Երրորդության քարոզիչն էր այդ օրերուն, ու դասախոս էր Եսայան վարժարանին մեջ: Կերեակայեք անդոհանքը, զոր այն օրերուն կրնար ապրած ըլլալ Դուրյան: Կյանքի երկունար ապրած ըլլալ Դուրյան: Կյանքի երկունար վերեն նայիլ պետք էր,



ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐԷ ԴՈՒՐՅԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ (1929 թ.)

թյանց կմասնակցի այն ըմբռնամով, որ անոնք դաստիարակի մը կուղղվին և ոչ թե «գրաբարի կախարդ»-ի մը, ինչպես որակվեր էր Դուրյան ճառերու ընթացքին:

«Միջանկյալ» այս շրջանին շատ քիչ արտադրեց Դուրյան, կամ գոնե շատ քիչ բան տպվեցավ իրմե, եթե չհաշվենք թերթերու և պարբերականներու մեջ լույս տեսած ցանցառ էջերը: Ավելի շատ թարգմանություններ

ինչպես սովոր էր նայիլ Դուրյան, չընկճվելու համար հուզումներու մրրիկին առջև:

Ապրիլ 24-ը հնձեր տարեր էր հայ ժողովուրդի մտավոր ընտրանին, ու սարսափ էր տարածեր մնացողներուն մեջ: Ու մյուս կողմն տարագրության, քարդի լուրերը կսկսեին հասնիլ զավառներեն, Կոստանդնուպոլիսը պահելով զարհուրանքի և մղձավանջի մեջ: Դեռ աքսորված չէր Զավեն պատրիարքը, բայց անկե արդեն խույս կուտային բոլորը:

Անուշ շուրի հերոսները, իրենց պատանը բաշված, հայոց հոգևոր պետը լեբը էին իր հոգեկան տագնապններուն մեջ: Մենք մեր թաքստոցներեն խոռվելով կհետևեինք դուրսի անցուղաթին: Կիմանայինք, թե ինչ բաշեր սկսեր էին իրենց հայ անունեն իսկ վախնալ, ու փոխարեն ինչ բաշեր կծնեին զգուշ կարծված մարդոցմե: Կիմանայինք, որ Դուրյան այն քիչերեն է, որ կերթա հաճախ սփոփել իր նախկին սանը, խրախուսել զայն, խորհուրդներ տալ անոր, նույնիսկ այն օրերուն, եղբոր արդեն հրաման հասեր էր անոր պատրաստ ըլլալ մեկնելու համար աքսոր:

Ինձ համար բացառիկ սփոփանք մը եղավ թղթակցութիւնը, զոր 1917-ին ունեցա իրեն հետ իմ թաքստոցս: Հոգեկան խռովքս մոռնալու համար գրելու տվեր էի ես զիս, ու

փորձեցի, ի միջի այլոց, թաքստախաղ մը գրել Արտաշես Բ-ի կյանքին: Պատմական ճշգրտումներ ընելու համար ոչ մեկ աղբյուր չունեի մոտս, ու չէի ալ կրնար ճարել: Մտածեցի Դուրյանին դիմել: Հոգը չըրավ, թե վտանգ մը կուգա ինձ հետ թղթակցելին, ու լուսաբանեց զիս ինձ համար մուֆ մնացած կետերու մասին:

Պետք է այդ օրերն ապրած ըլլալ, զգալու համար աղետը, որ հանկարծ կրնար պայթիլ հայ հոգևորականի մը գլխուն, երբոր հայտնվեր, թե կապ կապհե թաքստոցը գտնվողի մը հետ:

Պատերազմը պիտի ավարտեր շուտով: Ու պիտի փոխվեր միջանկյալ շրջանը Դուրյանի ալ կյանքին: Բայց զայն չփակած էջ մը ևս բանանք այդ կյանքին մուֆ մնացած գլուխներին:

9. ՀԱՅ ԴԱՏԻ ՀՈՐՁԱՆՔԻՆ ՄԵՋ

Արդարեւ նույն այդ միջանկյալ տարիներուն էր, որ Նդիշ Դուրյան իր անունը կապեց հայկական դատին համար փորձված նոր աշխատանքներուն:

Քիչեր միայն տեղյակ են սակայն հայ ժողովուրդի տառապանքին ու անոր ազատագրական ճիգերուն հետ կապված Դուրյանին: Շրջան մըն էր, երբ ասպարեզ էին գտած բոլոր տեսակի պոռոտախոսութիւնները, և անոնք է, որ ծափ կբաղեին ժողովներու և միտինգներու մեջ: Ու փոխարեն կային շուքին մեջ աշխատող մարդիկ ալ, զորս չէր շահագրգռեր ծափը: Ու նաև մարդիկ, զորս հեռու կկարծեիր հայ ժողովուրդի անմիջական հուզումներեն և որոնք ասպարեզ իջան բախտորոշ պահու մը, հաճախ առանց երեւալու: Ատոնցմե մեկն էր Դուրյան:

Հայ ժողովուրդը ապրեցալ ցնորքներու և պոռթկումներու, հույսերու և հուսախարութիւնաց քառորդ դար մը, 1888-են մինչև 1912. ձախողութիւնաց ու ձախողութիւնաց շրջան, երբ քով-քովի շնչեցին հերոսն ու խաշագողը, ու դավաճանները շփոթվեցան հաճախ իսկական հայրենասերներուն հետ: Շրջան, երբ հայկական դատը, արյամբ շաղախված, լքվեցալ աշխարհի բոլոր Պիղատոսներեն, անով շահագրգռվեցան այն ատեն միայն, երբոր պետք ունեցան հայ արյան, իրենց սակարկութիւնաց համար:

Այսպես անցալ քառորդ դար:

Պետք էր այս քառորդ դարը անցներ, որպեսզի Դուրյան դարձալ խառնվեր հայկական դատին, այս անգամ արդեն տարբեր պայմաններու մեջ ու տարբեր դերով:

Հայ ժողովուրդի կյանքին մեջ բացառիկ տարի մըն էր, դարձակետ մը գրեթէ:

Երիտասարդ-թուրքերը ամբողջ շորս տարի, ցուց էին տվեր, թե նույնքան անզիջող էին հայ ժողովուրդի իրավունքներուն հանդեպ, որքան ծեր թուրքերն էին, և նույնքան դաժան դեպի հայերը, որքան Համիդը:

Մյուս կողմէ, Աղանան իր տասնյակ հազար զոհներով եկեր էր սթափեցնելու հայր իր ցնորքներեն, և զայն դարձուցեր մտահոգ դեպի ապագան: Ան այլևս չէր հավատար թուրք վարիչներուն:

Հայկական դատը սեղան եկալ ճիշտ այդ պահուն: Կոստանդնուպոլսեն սկսան աշխատանքները, և էջմիածինը սիրով ստանձնեց պաշտոնական նախաձեռնութիւնը, Փարիզի մեջ ստեղծելով պատվիրակութիւն մը, որպեսզի պաշտոնապես հետապնդե հայկական դատը մեծ պետութիւնաց մոտ:

Հանդիսավոր ճառերի հետ, որոնք արտասանվեր էին Ազգային երեսփոխանական ժողովի դեկտեմբեր 21-ի նիստին մեջ, Ազգային կեդրոնական վարչութիւնն էր, որ կոչված էր հետապնդելու հայկական բաղձանքները: Իրականին մեջ, սակայն, Ապահովութիւն հանձնաժողովն էր, որ, կազմված իր հինգ անդամներեն, պիտի վարեր աշխատանքները դուրսեն աջակիցներու հետ: Դուրյան, իբրև Կրոնական ժողովի ատենապետ, մաս կկազմեր Ապահովութիւն հանձնաժողովին, նույնիսկ կգլխավորեր անոր դիվանը, հոգավոր մարմնով անոր լծված, ամիսներով լքած ուրիշ ամեն հոգ:

Այն օրերու իր աշխատակիցներեն մեկը կպատմե. «Հուզումով կհիշեմ, թե ինչպե՞ս Նդիշն արքեպիսկոպոս Դուրյանը, մարմնով ծեր ու տկար, բայց հոգիով արի, ոգևորված ու միշտ կատակներու մեջ իր հոգնութիւնը

քողարկելով՝ մոլեռանդ հավատացյալի մը ջերմեռանդությամբ, ամբողջ օրերով անտըր-տունը կաշխատե՞ր սեղանին կոթնած՝ կերա-կըրվելով հաց ու պանիրով կամ ածանցազին հեծկալի կտորով մը:

Ըսենք փակագծի մեջ, թե բովանդակ այդ շարժման ոգին Գրիգոր Զոհրապն էր սա-կայն: Համոզված, որ այլևս կարելի չէ ոչինչ սպասել թուրքերեն, և որ հայը այլևս ուրիշ կուլան չունի, բայց եթե ռուս ժողովուրդը, օգտագործեց իր կապերը ռուս դեսպանա-տան հետ՝ հայկական դատը մտցնելու հա-մար իր բնական հունը:

Եվ այնուհետև կսկսեին բանակցութիւն-ները թուրքերուն հետ՝ ծրագիրը ընդունել տալու համար անոնց ալ:

Վրա հասավ մեծ պատերազմը և ամեն ինչ քանդեց: Զբաղան ամեն հույս ու ցնորք: ու փոխարեն զարհուրանքի շոր տարիններ հայ ժողովուրդին համար: Եվ ահա զինադա-դարը: Գինովության նոր օրեր: Դեռ արցուն-քը չցամաքած՝ հայ ժողովուրդը սկսավ կառնել նոր հույսերու, ու նոր ցնորքներու ալ:

Կոստանդնուպոլիսը կրկին արբեցած էր: Կրկնվեին Հուրիեթի օրերը:

10. ԵՐՈՒՍԱԿՆԵՐ ԱԹՈՌԻՆ ՎՐԱ

Ներկա սերունդը չի գիտեր ու լավ է որ չգիտնա, թե ի՞նչ զարհուրելի բեռ եղած է երբեմն Երուսաղեմը հայ ժողովուրդի ունե-րուն: Նյութական բեռ ու բարոյական հոգեր հավասարապես առթած է ան հայ ժողովուր-դին որքան անցյալին մեջ, նույնքան մեր սերունդին օրով:

Օգտվելով պատրիարքի մը զառամած տա-րիքեն, կարգ մը միաբաններ ինչե՞ր շըրին վանքին մեջ: Միաբանութիւնը, երկուքի ճեղքված, հակասական տեղեկագրերով կշիռնեցներ Կոստանդնուպոլիսը, երկու կողմն ալ ապահոված իր պաշտպանները Ազգային ժողովին թե մամուլին մեջ:

Կոստանդնուպոլսեն դացած ոչ մեկ հրա-հանգ նկատի կառնվեր վանքին մեջ: Ոչ մեկ քննիչ լուսաբանված կուգար ետ: Ոչ մեկ պատմիրակութիւն կհաջողեր վանքին մեջ բռնկած կրքերը մարել:

Կրքերը լիազաղեցան Հարութիւն պատ-րիարքի պաշտոնավարութենէն հետո ևս: Ոչինչ կրցավ ընել Դանիել եպիսկոպոս ալ, որ տեղապահ էր կարգվել: Ի վերջո Ազգային երեսփոխանական ժողովի որոշմամբ Օրման-յանը իբրև լիազոր Երուսաղեմ ղրկվեցավ Կոստանդնուպոլսեն, Վահան Թեքեյանի հետ, բայց Երուսաղեմ դեռ հասած չէին, երբ աշ-խարհ բռնկեցավ. այնպես որ Թեքեյան վանք

Այդ օրերուն զանազան հոսանքի մարդիկ քով-քովի եկանք՝ նոր կյանք ստեղծելու հա-մար: Եվ իրարու ետեւ մարմին առին նոր-նոր թերթեր ու նոր կազմակերպութիւններ. նույն այն ոգևորութիւնը, ինչ որ Հուրիեթի օրերուն:

Նույն այդ օրերուն ստեղծվեցավ Ազգային խորհրդակցական ժողովը բոլոր հոսանքնե-րեն ներկայացուցիչներով, որպեսզի հայ կյանքը վարե, մինչև որ ազգային իշխանու-թիւն ստեղծվի բնականոն պայմաններու մեջ:

Այդ շրջանին բախտն ունեցա աշխատակ-ցելու Դուրյանի հետ Ազգային խորհրդակցա-կան ժողովին մեջ, ու մոտեն ճանչցա մար-դը, որ գիտն զգալ ու հուզվիլ, բայց և խու-սափիլ պողովում, որ կապիլ իր ժողովուր-դին բովանդակ սուգը՝ բայց կրնա ցասումը զսպել, որ վաղվան հույսերով կրնա օրորե: իր հոգին՝ սակայն իր խանդավառութիւնը փողոց չի տանիր:

Շատ չհուսաւ, որպեսզի շատ չհուսախաբ-վինք. այս էր իր փիլիսոփայութիւնը:

Ճանչցա իր մեջ մարդը, որ կժպտի տագ-նապի պահուն, ու կմնա միշտ պարզ ու միշտ համեստ՝ ինչ փառք ալ ընծայես իրեն:

Իսկ շատավ և Օրմանյանը առանձին մնաց դեպքերուն առջև:

Ու դեպքերը հաջորդեցին իրարու: Հայա-ջինջ սարսափները սկսե՞ր էին: Թուրք կառա-վարութիւնը Կոստանդնուպոլսի Պատրիար-քութիւնը ջնջեց, Կիլիկիան հաշվեհարդարի ենթարկեց իր ժողովուրդին հետ մեկտեղ, ու Սահակ կաթողիկոսը Երուսաղեմ տարավ նստեցուց, իբրև միակ հոգևոր պետ Թուր-քիո հայոց, այսինքն անոնց, որ մնացե՞ր էին և կամ պիտի մնային:

Զինադադարը ոչ Օրմանյան գտավ հոն, ոչ ալ Սահակ խապայան: Մեկը դարձեր էր Կոստանդնուպոլիս, Թուրքիո փլուզման առաջ, մյուսը նահանջեր էր Երուսաղեմէն թուրքերուն հետ մեկտեղ: Երուսաղեմը ան-գամ մըն ալ նետվեր էր անստուգութիւն մեջ:

Այս վիճակը չէր կրնար սակայն հավիտյան տևել: Պատերազմէն հետո այլևս առենն էր անիշխանութիւն վերջ տալու:

Ու մարդ մը փնտովեցավ, որպեսզի վանքը մահվոն փրկել: Այդ մարդը գտնվեցավ հան-ձին Դուրյանի:

Կոստանդնուպոլսո Ազգային ժողովը հան-դիսավոր նիստի կանչվեցավ 1921 թվականի սեպտեմբեր 5-ին, Մայր Եկեղեցւո մեջ: Զակերպութիւն մըն էր միայն այդ, քանի որ արդեն միաբանութիւնը համաձայնած

էր անոր շուրջ բերել վանքին մեջ, ու ինքն ալ տված էր իր հավանութիւնը:

Եվ որովհետեւ օրենք էր, որ միաբան մը միայն կարենա Ս. Հակոբա Աթոռը նստիլ, միաբանութիւնը արդեն ապրիլին զայն անդամ էր հռչակած իրեն, և ինքը արդեն իբրեւ ուխտավոր Սրուաղեմ կգտնվեր, երբ Կոստանդնուպոլսի մեջ կգտնարվեր Ազգային երեսփոխանական ժողովը:

Հովանավոր իշխանութիւնները թույլ էին տվեր, վերջին անգամի մը համար, որպէսզի Կոստանդնուպոլսին ընտրեւ Սրուաղեմի պատրիարքը:

Երբ տուփը կծգեինք մեր քվեները, մեր մտքին չէր անցնիր, թե այս մարդը պիտի կարենա Սրուաղեմը փրկել: Քանի՜-քանի պատվիրակութիւններ գացեր էին հոն ու ձեռնունայն ետ դարձեր: Ի՞նչ պիտի կրնար ընել միակ մարդ մը, որ ուրիշ բան չունէր, բայց եթէ միայն իր պատկառանքը:

Եվ սակայն այս մարդը ալլափոխեց գրծ-տուկան ուրջը: Ճիշտ է, իր հոն ոտք կոխած պահուն հին կրքերը չկային այլևս, ու չկային նաև զանոնք արծարծողները: Բայց դեռ կային անոնց հետքերը: Պետք էր ցրիվ տալ

զանոնք, կյանք ստեղծել ավերակներուն մեջ: Իւրոյան կրցավ այդ ընել:

Մեր դերը չէ պատմել անոր պատրիարքութիւնը Սրուաղեմի մեջ: Բավականանալը ըսելով միայն, որ պատրիարքութեան մոտ տասը տարիները, 1921—1930, խաղաղութիւն բերին վանքին մեջ: Ու խաղաղութիւնը, հովանիին տակ բացառիկ պատկառանքի մը, հրաշքներ գործեց հոն:

Նախ Սրուաղեմի հայ վանքին վերադարձուց կորսված վարկը: Արմաշը եկավ շարունակվիլ Սրուաղեմի մեջ, և սկսավ ճնշել Գուտեմբերգի մեքենան: Հետո շունչ առավ վանքը, դարերով պարտքերու տակ հեծելի հետո: Պետք չեղավ աշխարհ թափառիլ շղթա մը վզին: Անձին հմայքը բավական էր:

Իր հոբելյանը, 1929-ին, համազգային ցույց մը եղավ: Ու հաջորդ տարին, երբ աշքերը կփակուր, կմեկնէր պարտք մը կատարած ըլլալու գոհունակութեամբ, հավանաբար միշտ ժպտը դեմքին, ու հեզնութիւնը շրթներու վրա: Ան գնաց հավանաբար մահը հեզնելով, ինչպես հեզներ էր կյանքն ու իր փորձութիւնները:

11. ԴՈՒՐԵԱՆ ԸՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ

Իւրոյանի կյանքին գլխավոր հանգրվանները տալն հետո, կփորձվինք վերլուծման մը ենթարկել նաև մարդը իր զանազան երեսներուն մեջ:

Բովանդակ իր կյանքը փայլեր էր այլազան ձիրքերուն մեջ: Ուսուցիչն ու դիտնականը, բանաստեղծն ու հանրային գործիչը եկեր միացեր էին հոգևորականին: Հայ ժողովուրդը Դուրյանը ճանչցեր ու մեծարեր էր իբրեւ միակուր զանգված բազում արժեքներու, որոնց մեջ հոգևորականն ալ:

Աչքերը փակելու մոտ, ան մեզ կըսեր սակայն, թե ինք պարզապես հոգևորական մըն էր եղեր իր բովանդակ կյանքին մեջ:

Ան բառ առ բառ ըսավ արդարև իր հոբելյանին օրը.

«Իմ հիսնամյա քաղաքացիական հոբելյանն է միայն, որ կկատարվի այսօր, և եթէ ուրիշներ տարբեր արժանիքներ ալ տեսան անձիս վրա, այդ իմ ուզածս չէր: Ես հավանեցա այս հանդիսավորութեան, ոչ թե ինքզինքս փառավորելու, այլ՝ միջնորդաբար՝ առիթ մը ընծայած ըլլալու համար ամեն անոնց, որ կսիրեն իրենց Եկեղեցին, և նախանձախնդիր են պատվելու համար անոր մեկ պաշտոնյան, որ իր պարտքը կատարած է լոյս:»

Դուրյան այդ պահուն կմոռնար սակայն, որ համազգային ցույցը, զոր հայ ժողո-

վուրդը կընծայեր իրեն նույն այդ հոբելյանով, միմիայն քահանային, այսինքն հոգևորականին չէր, որ կուղղվեր:

Եթէ պահ մը սակայն տարվինք ընդունելու, թե հոգևորականը գերիշխող եղած է իր մեջ գոնե որոշ պահերու, պետք չէ սակայն սովորական իմաստով առնենք բառը, այսինքն մեկը, որ վեղար ունի գլուխը, պատարագ կմատուցանէ, քարոզ կխոսի, հետո կերթա քնանալ հանդարտ խղճով մը:

Դուրյան հոգևորականը ուխտված մըն էր ավելի, նվիրված մը ոչ միայն Հայ Եկեղեցիին ու անոր ավանդութիւններուն, այլ բոլոր այն սրբութիւններուն, որոնք հայ ժողովուրդին են:

Պատմական իր քարոզին մեջ, զոր արտասանեց 1921 նոյեմբեր 7-ին, երբ իր ուխտը կըներ իբր պատրիարք Սրուաղեմի, ան կերպով մը իր կոչումը կբացատրեր:

«Ո՛վաւ. գոցեք քիչ մը հին հնչեալս բառը նորաթեք ականջներու... Գիտենք, թե կյանքի նոր ըմբռնումներու փշուրներն ընդհարվելով՝ մարելու մոտ երերումներով կառկայծի շատ անգամ ուխտին ներքին լույսը: Եթէ միայն «աղբատ, հնազանդ և զգաստ» ըլլալու պայմաններով ապրեինք, մեր հոգին ինք իրմով սնանելու հպարտութեամբ պիտի աճեր միայն՝ իր անհատական առանձնացումին մեջ: Այդ բավա-

կան չէ՝ մեզի: Ավելի նպատակահարմար կյանքի մը կուղղվի մեր ուխտը, մեր եսեկյանքի մը կուղղվի մեր ուխտը, մեր եսեկյանքի մը հյուրընկալելով մեզմե զուրս տարուան մեջ հյուրընկալելով մեզմե զուրս տարածվելու տենելը, մեկ խոսքով՝ համասեռ մասնիկները դառնալու այն հավաքական մարմնին՝ մեր Ազգին՝ որուն մեջ պիտի վերապրինք: Լավ իմացված ուխտը դեղն է այն ախտին՝ որ ընդհանրապես մեր էութեան մեջ կսկսի դարանիլ այն օրեն, երբ կպակսի մեզմե ու մեր ժողովուրդին հոգևոր շափիղ մը ցուլցն տալու և օրինակելի կյանք մը հանդիսադրելու արիությունն ու պարտքը: Եվ որպեսզի կարելի ըլլա ամենուս՝ մեր ուխտի կենցաղը հաշտեցնել՝ իր հին ձևին մեջ իսկ՝ վեհագույն պահանջումներուն հետ, պատրաստ ենք գիտակից նվիրումի մը անխռովությունը զգալ մեր մեջ և զգացնել զայն ուրիշներու Ոչ մեկ տրամաբանություն արժեք չունի այն հոգիին համար, որ գիտե անձնուրացութեամբ ծառայել սուրբ դատի մը, ըլլա պատերազմի դաշտին վրա, ըլլա մենաստանի խորություն մեջ:

Մանվածապատ այս բառերուն մեջ անշատ բան կըսեր Ուխտն էր, որ հիմը կհըռնակեր հայ հոգևորականին, ու այդ ուխտը ուրիշ բան չէր իրեն համար, բայց եթե տեսակ մը երդում ժողովուրդին ծառայելու: Եվ ան չդրժեց իր ուխտը. ծառայեց ինչպես Եկեղեցիին, նույնպես իր ժողովուրդին: Աղկե է, որ հայ ժողովուրդը իրեն համար վեր էր ամեն բանի: Աղկե է նաև, որ տառին չկառնեցավ երբեք. ավանդապաշտ և ձևամոլ երբեք չեղավ: Հոգևորական Դուրյանի հատ-

կանչական գիծերեն մեկը իր լայնամտությամբն էր, և ինչպես կըսեր Բարգեն Եպիսկոպոս իր մահվան առթիվ՝ «Լամբրոնացիի մը լայնախոհությունն ունեւր ան իր կրոնական ու հարանվանական հարաբերությունց մեջ»:

Լայնախոհ էր, այո՛, բայց կեղծիք չկար իր հավատքին մեջ: Կեղծ չէր իր բարեպաշտությունը: Ան կրցած էր կրոնքը հաշտեցնել գիտության հետ: Կրնանք նույնիսկ ըսել, թե գիտունի մը պես մոտեցեր էր ան կրոնքին:

Շատեր ըսին, թե Ռենանի պես կմեկնեք կրոնքի հետ կապված շատ մը բաներ: Արդև Ռենանի հանդեպ պաշտամունք ունեւր, և պարզ դիպված մը չէր, երբ 1889 մայիսին, Փարիզ գտնված ատեն, Դուրյան այցի գացած է Ռենանին:

Բայց սխալ պիտի ըլլար ըսել, թե Ռենանի բոլոր տեսությունց հետևող մըն էր ան: Ռենանի հանդեպ իր պաշտամունքը առավելապես գիտնականին համար էր և անոր ժողովածավալ համությունը համար: Տքնելի հաճածավալ համությունը համար էր, և տառեծույք զգացող մարդու համար էր, և տառերուն ետին ոգին փնտռող մարդուն համար: Ռենանի հանդեպ իր պաշտամունքը ան փոխանցած էր իր աշակերտներեն շատերուն ալ: Ասոնցմե ոմանց սեղանին վրա ևս Ռենան կար:

Ոմանք «հայ Ռենանը» ըսին իրեն համար: Բայց մասամբ միայն ճիշտ էր այդ: Հակառակ հարատև իր որոնումներուն՝ հոգևորականը դիմացավ իր մեջ:

12. ԴՈՒՐԻՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Եթե իր բոլոր ձիւրքերն ալ տատամսիս զետեղել իր պատվանդանին մեջ, Դուրյան կրնար անմահանալ իբրև ուսուցիչ:

«Ուսավ և ուսուց», ի՛նչ լավ բնորոշեր է զայն Վազգեն Կաթողիկոս: Ուսավ և ուսուց՝ երբ դեռ, գրեթե պատանի, ուսուցանել սկսավ Սկյուդարի մեջ. «Տասնևութ տարեկան ըլլալու էր այն ատեն,— ինչպես կգրե Լևոն Բաշլյան,— երբ վարժարանին մեջ հայերենի դաս կուտար, Եղիշեն վերժանել տալով. նիհար պատանի մըն էր, նորաբույս մորուքով մը, շատ զվարթ, ավելի աշակերտներուն մեծ եղբայրը քան դասատուն, և իր դասի ժամը ցնծալից շարահարություն մըն էր խնդրներուն:

Ուսավ և ուսուց, երբ հաղիվ քսան տարեկան, զայն Պարտիզակ տարին՝ որպես ուսուցիչ և քարոզիչ: Տասը տարի մնաց հոն և իր առաջին սերունդը տվավ:

Մկրտիչ Եպիսկոպոս Աղավնունի, որ իր անդրանիկ սաներեն եղած է Պարտիզակի մեջ, հուզումով կվերհիշե Երիտասարդ Դուրյանը իրենց գյուղը գալուն և անոր առաջին դասերը: Կպատմե անոր ուսանելու և ուսուցանելու կիրքն ամեն րոպե, ամեն տեղ և կողքնին անոր դասերը ըլլա վարժարանին մեջ, ըլլա բացօդայ, ծառերու հովանիին տակ, և սերունդը, զոր հոն ստեղծեց ան:

Պարտիզակի իր մեկ ուրիշ սանը, Դրիգոր Միսալյան, կպատմե, թե «սկիզբները հայ ոսկեդրոնիկ լեզուն կկազմեր իրենց երիտասարդ ուսուցչին մտքի վայելքը. աշխարհաբար գրականությունը չէր ճանչնար. չէր խոսեր ան իր սրտին ու հոգիին. ուներ գերազանցորեն իր այդ գինովությունը շուրջիններուն ևս փոխանցելու կարողությունը... կրոնանար, որ իրեն պես զգայինք ամենքս, իրեն չափով եթե կարելի էր, և չէր ներք կուրությունը գե-

դեցիկին ու վսեմին հանդես: Վա՛յ անոր, որուն ճաշակը կտկարանար, որ կսողար գետնի վրա, փոխանակ սավառնելու իր թևերով մաքուր բարձունքներու մեջ»:

Մխալյան կպատմե նաև, թե Դուրյան ինչպես կսրբագրեր իր սաներուն շարադրութիւնները. «Տեսնելու բան էր, այդ պահերուն, իր զվարթամտութեան և սրամտութեան բոլոր բովանդակները, որով կարտահայտվէր ցույց տալով գրվածքին թերութիւնները, լեզվի, արտահայտութեան, մտածումի և դասավորութեան բոլոր թերութիւններուն մեջ. փլցնելով ենթակային մեջ ինքնաբաւութեան պոռոտ շները, և մերկացնելով գրվածքը իր միամիտ ու բռնազբոսիկ բոլոր գեղեցկութիւններէն ու շարունակներէն: Ասով իր աշակերտները կվարժվէին զգուշավոր դանաւ, կառչիլ բնականին և պարզին, բաներու և գաղափարներու ընտրութեան և դասավորումին մեջ»:

Սրեւսունը նոր բոլորած է, երբ զայն կկանչեն Արմաշ, Դպրեվանքին իբր փոխ-տեսուչ, որպեսզի հոն ալ ուսանի և ուսուցանե: Տասներկու տարին, զոր Արմաշ անցուց, իր կյանքին ամենէն բեղմնավոր տարիներն են և իր ուսուցչական ասպարեզին փառքը:

Վանք մը չէր արդեն Արմաշը հին օրերու իմաստով, ոչ ալ հին Արմաշը մնաց ան, երբ Օրմանյանն ոտքը դրավ հոն, և իր ետեւն կանչեց Դուրյանը: Երկուքին տքնութեան պտուղն է Արմաշ, բայց սերունդը հասունցավ առավելապես Դուրյանի շունչին տակ:

Հոն էր, որ հորիզոն բացվեցավ երիտասարդ վարդապետին, որ իր կարգին հորիզոն բացավ իր աշակերտներուն. կապված երեք շմնաց տառին, ինչպես որ շուգեց, որ մնան իր աշակերտներն ալ. ոգին էր զինք խանդավառողը, նույնիսկ հավատքի հարցերու մեջ:

Բարգեն կաթողիկոս կարոտով կհիշե իր աշակերտութեան տարիները Արմաշի մեջ, ու այս առթիւ մեզ կպատմե նաև Դուրյանի մեթոդը: Կրսե, թե դասագրքերու չէր կապվեր Դուրյան, և դասագրքի քարացած կաղապարներուն վրա չէր ուզեր ձեռն աշակերտին մտավոր գործունեութիւնը: Ան քննադատութիւնը պահանջ կնկատեր տրամաբանող մտքին, և տրամաբանութիւնը՝ ուղիղ մեթոդը ճշմարտութիւնները զանազանելու ստույգութիւններն և իրականները կեղծներն: Դաստիարակութեան մեջ իր զվարթութիւնը, սրախոսութիւնները և մանավանդ կատակները, հաճախ լարված հեգնանքի և երգիծանքի զսպանակներով, մեծ դեր կկատարէին:

Մեսրոպ պատրիարք Նարոյան, իր կարգին, գովքը կըներ իր նախկին ուսուցչին, անոր մեջ պանծացնելով իսկական վարդապետը, լուրջ, խորհրդավոր և շնորհալի, որ

կհիշեցներ հինավուրց նարեկացիները, Շնորհալիները և Տաթևացիները: Ու կըսե. «Եղապան բախտ մըն է մեծ ուսուցիչներու ոտքը նստիլ և ուսանիլ: Հոգեկան ջերմ հաղորդակցութիւն մը կզոգեր մեզ իրարու. ա՛լ պիտակ վաժմապետ ու աշակերտ չէինք. ամեն պայմանադրական պատվար ու կաշկանդում խորտակված ու անէացած էր: Մենք ուսուցիչներս, մեր ներքին կյանքը բեղմնավորող առողջ սերմերը կընդունէինք թարմ միտքով ու խանդավառ հոգիով, զորս մեծ ուսուցիչը իր հոգեպարար շունչով կավանդեր մեզ»:

Իր մեկ ուրիշ աշակերտը, Եղվարդ Եպիսկոպոս Փերտահճյան, կգրե ուսուցիչ Դուրյանի մասին. «Հայ լեզուն, հայ գիրը, հայ պատմութիւնը, հայ կյանքը, ամբողջ հայրենագիտութիւնը իրեն համար մեծ գաղտնիք մը չունին: Ան գիտե հմայել ուսանողները հայ լեզվի գանձերովն ու գեղեցկութիւնովը: Իրերու և գանձերու իրական արժեքը պահելով հանդերձ, վհուկի մը ճարտարութեամբ կկենդանացներ անցյալի հուշերն ու հիշատակները՝ լուսեղեն թերաստվերի մեջ ցույց տալով մեծ դմբերը»:

Արմաշի վանքեն երբ Իզմիր գնաց իբրև առաջնորդ, դարձյալ չհրաժարեցավ ուսանելու և ուսուցանելու կիրքէն: Միասին էր շալկեր տարեր իր գրադարանը, և ուսուցչի բնմ ապահովման այնտեղ ևս, դասեր ստանձնելով Մեսրոպյան և Հոսիսիմյան վարժարաններուն մեջ: Բարձրագույն վարժարաններ չէին, որպեսզի լրիւ սերունդ խմորեր հոն ալ. բայց իրմե այնտեղ ևս կայծեր ցանցեց: Իր այդ շրջանի սաներն ու սանուհիները հափշտակութեամբ հիշած են հետո անոր դասի պահերը:

Կոստանդնուպոլսո պատրիարք ընտրված 1909-ին՝ մոտ երկու տարի ան զրկվեցավ իր բուն կոչումէն. ուսուցչի ամբիոն չունեւ: Ու կենթադրեմ, որ իսկական տառապանք մըն էր այդ իրեն համար: Բարեբախտաբար երկար չտևեց այդ խորթ շրջանը:

Օրմանյանը երբ տապալեցին, Լաւր փողոցի խուցը քաշվեցավ, թաղվեցավ գրքի դեղերուն ծոցը, գրեց ու գրեց. «Ազգապատում»-ի զույգ հատորները և «Հայոց Եկեղեցին» այդ օրերու պտուղն են. հալածականին ընծան են անոնք զինք հալածողներուն:

Դուրյան երբ լքեց ասան, դուռնե դուռ ինկավ աշակերտ ճարելու համար: Իզմիրի աշաջնորդութեան և Կոստանդնուպոլսո պատրիարքութեան խորթ տարիներէն հետո, բացառապես ուսուցիչն էր, որ կհառներ դարձյալ իր մեջ. դասեր ստանձնեց ան զանազան վարժարաններու մեջ, ու իր հոգին դարձյալ շփման մեջ դրավ նոր սերունդին հետ:

Ուսուցչութիւն մի ի թարգմանակ պատնե-
րազմի օրերուն ալ: Դահիճը խնայել էր ի-
րեն, ու ինք մնացեր էր Կոստանդնուպոլիս:
Քաշված Տատալլա, իր գրքերուն մեջ, կշա-
րունակեր ուսանիլ: մյուս կողմն դասի կվա-
զեր զանազան վարժարաններու մեջ:

Պատերազմն հետո պահ մը դարձաւ
զրկվեցաւ ուսուցչի բեմեն, ու շուտով ցմիշտ
պիտի թողուր նաև Կոստանդնուպոլիսը:
Բայց մոտ տասը տարին, զոր անցուցեր էր
Կոստանդնուպոլսո մեջ, այնպիսի պահու մը,
երբ արևմտահայութեան մտքի ուստանը իր
վերջին փայլը կապրեր, այլապես բեղմնա-
վոր շրջան մը եղաւ ուսուցչի Պուրյանի հա-
մար. դեռատի սերունդն էր, որ իրեն հետ
շփման մեջ էր մտեր այս անգամ, Կեդրոնա-
կանի ու Պետպերյանի, Հինդլլանի ու Պեղադ-
յանի, Յսայանի, Դպրոցասերի ու Արամյանի
մեջ:

Իր հորեկանին առթիւ իրենց երախտագետ
սանի տուրքը բերին շատ շատերը զանազան
դպրոցներու մեջ իրեն աշակերտողներն:
Բնական է անխառն պիտի ըլլային բոլորին
ալ զմայլանքի արտահայտութիւնները նման
առիթով մը: Ինչ որ կարժեք ընդգծել, իր
ձգած հետքն էր Կոստանդնուպոլսո նոր սե-
րունդին վրա: Կեդրոնականի մեջ իրեն աշա-
կերտողներն լսած եմ, որ գիտութեան բովն
անցած գիտելիքներով կօծտեր ան իր սա-
ները: Եվ ակամա միտքս կուգային Հմայակ
եպիսկոպոս Դիմաքսյանի հայ եկեղեցական
պատմութեան դասերը մեզի, Յսայան վար-
ժարանին մեջ, աղկն քառողը դար առաջ, երբ
երկյուղածութեամբ ու հափշտակութեամբ
կատարման հայոց Արգար թագաւորին թըղ-
թակցութիւնը Քրիստոսի հետ, ու մեզ գոց
ինչ կուտար նույնիսկ Արգարի նամակը
Քրիստոսի ուղղված. «Արգար Արշամայ...»

Երուսաղեմի իր պատրիարքութիւնը զինք
դրեց Արմաշը վերստեղծել Ս. Հակոբա հո-
վանիին տակ, հիմը դնելով հոգևոր վերա-
ծնութեան մը: Ուսած ու ուսուց հոն ալ: Այդ
օրերու սերունդն շատերը կան. թող անոնք
պատմեն, թե ինչ ցանց հոն, իր պատրիար-
քութեան մոտ տասը տարիններուն:

Բարգեն, իր լավագույն ձեռնասուններն
մին, որ անոր վերջին տարիներուն ևս ապ-
րեցաւ անոր մտերմութեան մեջ, կրսե, թե ան
«երբ կղաղրի ուսուցանել» կձանձրանա. երբ
կղաղրի ուսուցանել, կհիվանդանա. յոթա-
նասունի դռները ոտք դրած է, և դեռ կուսում-
նասիրե, ըսնց՝ կուսանի... Ամեն օր նոր
բան մը պետք է ավելնա իր առատ պաշա-
րին վրա...»: Հետո, բնորոշելու համար անոր
կատարած դերը իբր ուսուցիչ, Բարգեն կրսե,
թե «Պուրյան սրբազանի վարդապետական

կամ ուսուցչական ծառայութեան հավասա-
րող էջ մը գտնելու համար մեր ազգային-
եկեղեցական պատմութեան մեջ, պետք է
բարձրանալ մինչև Ե դարու ոսկեդարյան
դպրոցը՝ Սահակ-Մեսրոպի շունչին տակ, և
դպրոցը՝ Սյունյաց դպրոցը, Որոտնե-
ժն դարուն ալ՝ Սյունյաց դպրոցը, որոնք
ցիլի և Տաթևացիի գավազանին ներքև, որոնք
դարազուկներ ստեղծեցին իրենց ժամանակ-
ներուն մեջ. իսկ մեզի ժամանակակից պատ-
մութեան մեջ Պուրյանն է այն միակ հոգևո-
րական դեմքը, որ ուսուցիչն ու վարդապետը
եղած է բազմաթիւ աշակերտութեան մը հի-
սուն տարիներու ոսկեշող շղթայումով մը»:

Շատեր են ըսած, թե Եկեղեցւո բեմը ու-
սուցանելու ուրիշ ամբիոն մըն էր իրեն հա-
մար: Թյուրիմացութիւնն է այդ: Ճիշտ է, որ
աստվածաբանական մարզանքներ կամ բա-
րոյախոսական հասարակ տեղիքներ չէին իր
քարոզները: Բայց չէին նաև մտերմութեան
այն պահը, երբ ուսուցիչ մը դեմ-հանդիման
կուգա իր սաներուն հետ:

Ավելին. իր գրական ստեղծագործութեանց
մաս կկազմեն իր քարոզները, զորս կրնայիր
ըմբռնել այնքան հաճութեամբ, որքան իր
քերթվածները:

Պերճախոս էր իր քարոզներուն մեջ, այ-
սինքն կտպաւորեր, բայց հետտրական
ձևեր երբեք չունեի: Կտպաւորեր խոսքին
գեղեցկութեամբ և ձայնին քաղցրութեամբ:

«Իր աղու ձայնը մերթ երգի մը սրտագրաւ
ուրաւ կանուր և մերթ կշռաւոր քերթվա-
ծի մը դաշն հնչականութիւնը», — կըսե
Թորգոմ պատրիարք ակնարկելով Պուրյանի
քարոզներուն:

Հազվադեպորեն աշակերտ մը կկապվի իր
ուսուցչին հետ այնքան սերտ ու այնքան
շերմութեամբ, որքան կապված են Պուրյանի
աշակերտները իրենց ուսուցչին: Եվ այդ կա-
պը երբեք չեն կրցած ջնջել տարիները: Իր
սաները ինչ դիրքի ալ հասած են, միշտ ա-
շակերտ նկատած են իրենց զիրենք անոր:
Ու պղտիկ արժանիք մը չէ ուսուցչի մը հա-
մար՝ ցմիշտ պահել իր հմայքն ու պատկա-
ռանքը, դարու մը մեջ, ուր աշակերտները
շուտ մը կգլեն կանցնին իրենց վարպետնե-
րը, ու նոր համբաւները հեզանքով կնա-
յին ետև: Ու կրնանք ըսել, որ Պուրյան ամ-
բողջ սերունդի մը ուսուցիչն էր:

Հարկ չկար, որ ուղղակի աշակերտներ ի-
րեն: Առիթ մը միշտ կըլլար, որ իր իմաստու-
թենն քեզ կայծ մը հասնեի:

Ու քանինհր կան, որ իրեն աշակերտած
են՝ առանց գիտնալու:

(Շարունակելի)